ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

22 JUN 2005

60

ОБЯЗАТЕЛЬНЫЙ ЭКЗЕМПЛЯР

# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

9
Պ-30

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱդրԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ
Բաքու—1940

13 JUL 2013
ОБЯЗАТЕЛЬНЫЙ ЭКЗЕМПЛЯР

# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

## I. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՅԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (2 ԺԱՄ)

*Պատմությունը վորպես գիտություն: Մարքսը, Էնգելսը Լենինը, Ստալինը պատմության մասին: ՀամԿ(բ)Կ ԿԿ յեվ ԽՍՀՄ ԺԿԽ 1932 թ. օգոստոսի 25-ի յեվ 1934 թ. մայիսի 16-ի վորոշումները քաղաքացիական պատմության դասավանդման մասին միջնակարգ դպրոցներում: Ընկերներ Ստալինի, Կիրովի յեվ Ժդանովի դիտողությունները ԽՍՀՄ պատմության դասագրքի կոնսպեկտի առթիվ: Միջնակարգ դպրոցի III յեվ IV դասարանների համար ԽՍՀՄ պատմության լավագույն դասագրքերի կոնկուրսի կառավարական հանձնաժողովի ժյուրիի վորոշումները:*

*Գրականություն.* — Маркс и Энгельс, Соч. т. XIV, стр. 667. Ленин, Соч. т. XVIII, стр. 13. *Մարքս յեվ Էնգելս, «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», եջ 42. Ստալին, Զրույց գերմանական գրող Եմ. Լյուդվիգի հետ, եջ 7: Ընկեր Ստալինի նամակը «Լենինը պատմության դասագիրք կազմողներին (1937 թ.): ՀամԿ(բ)Կ ԿԿ, ԽՍՀՄ ԺԿԽ յեվ ԽՍՀՄ ԿԳԿ վորոշումները դպրոցների մասին (ժողովածու), եջ 47—48 յեվ 30—40, «Խորհ. Հայաստան», 1936 թ. հունվ. 28: «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը»: Նյութեր ուսուցչական խորհրդակցությունների համար, 1937 թ. եջ 10—15:*

## II. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՅԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ, ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ (4 ԺԱՄ)

*Պատմության ծրագրերի կառուցվածքը յեվ սկզբունքները: Ծրագրերի բովանդակությունն ըստ դասարանների: Պատմական կոնկրետ փաստերը յեվ սիստեմավորման սկզբունքները:*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ... ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԽՍՀ-ССР
2554
40

60
2011-07

*Պատմական փաստերի ժամանակագրական հետեվողականությունը: Ուսումնական նյութը յերեխաների տարիքային առանձնահատկություններին հարմարեցնելը: Պատմական գործիչները: ՀամԿ(բ)Կ ԿԿ յեվ ԽՍՀՄ ԺԿԽ 1934 թ. մայիսի 16-ի վորոշումը պատմության դասընթացների մասին:*

*Գրականություն.—ՀամԿ(բ)Կ ԿԿ, ԽՍՀՄ ԺԿԽ յեվ ԽՍՀՄ ԿԳԿ վորոշումները դպրոցի մասին (ժողովածու), եջ 47—48 յեվ 30—41.* „Спровочник партработника“, 1934 г. вып. 8, стр. 357. *Պատմության ծրագրային նյութեր III—IV, V—VII, VIII—X դասարանների համար:*

## III. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

### 1. Պատմության դասի ընդհանուր մեթոդիկան (4 ժամ)

*Մեթոդը վորպես ուսուցման միջոց: Մեթոդը վորպես պատմական յերեվույթների գիտական հետազոտության յեվ բացատրության միջոց: Պատմության դասավանդման հիմնական մեթոդները: Աշակերտների տարիքային առանձնահատկությունները:*

*Պատմության դասընթացի յեվ կոնկրետ նյութի բնույթը:*

*Պատմության դասը վորպես պատմության ուսումնասիրության աշխատանքի կազմակերպման հիմնական ձեվ: Դասի պրոցեսը յեվ հիմնական տարրերը: Դասի պլանավորումը, դասի կազմակերպչական հարցերը: Նյութի պլանավորումը, կոնսպեկտը, տեքստը: Դասի կահավորումը: Գրականությունը յեվ դիդակտիկ նյութը:*

*Գրականություն.—Վերև հիշված ժողովածուն, եջ 11—12, 14—15 յեվ 36:*

### 2. Նյութի փաստական շարադրման սկզբունքները (2 ժամ)

*Ուսուցչի գեղարվեստական պատմվածքը, փաստական նյութի շարադրությունը, նրա առանձնահատկությունները:*

Նյութի շարադրման կուսակցականությունը։ Յեզրակացությունները յեվ ընդհանրացումները։ Բովանդակությունը յեվ պատմական գործչի դերը պատմելու յեվ շարադրելու մեջ։ Պատմելու յեվ շարադրելու տեխնիկան։

Պատմական անցքի տեղի, պատմական գործչի ցուցադրումը։

Աշակերտների ակտիվությունը դասի ժամանակ։

Գրականություն.—Բաց դաս Շահումյանի անվան դպրոցի VII դասարանի պատմության դասատու Զ. Թադեվոսյանի 1938 թ. 1/XI։ Բաց դաս Ձերժինսկու անվան դպրոցի VIII դաս. դասատու Պողոսյանի։

### 3. Զրույցը պատմության դասին (2 ժամ)

Տարբեր տիպի զրույցները։ Ուսուցչի ղեկավար դերը յեվ աշակերտների ակտիվությունը զրույցի ժամանակ։ Հարցադրման մեթոդիկան։ Աշակերտների պատասխանները։ Աշակերտին զրույցի մեջ ներգրավելը։ Նրանց կապակցված արտահայտությունները։ Աշակերտների արտահայտությունների ուղղելու ձևերը։ Ամփոփումը զրույցի վերջում։ Դասագրքի ոգտագործումը զրույցի ժամանակ։

Գրականություն.—Ա. Խմելնիցկի—«Ոպրիչնինա» դասի սղագրությունը։

### 4. Պատմական գործչի բնութագրումը (2 ժամ)

Պատմական գործչի գործունեության ուսումնասիրության նշանակությունը աշակերտների կոմունիստական դաստիարակության համար։ Պատմական գործչի ցուցադրման մեթոդները։ Բնութագրման սկզբունքները։ Բնութագրումը պատկերավոր յեվ եմոցիոնալ դարձնելը։ Փաստաթղթերի յեվ դիտողական նյութերի ոգտագործումը բնութագրելու ժամանակ։

Լենինը յեվ Ստալինը պատմական գործիչների մասին։

Գրականություն. — Ստալին — «Զրույց գերմ. գրող Եմ. Լյուդվիգի հետ», եջ 7. Материалы к совещанию учителей нач. школы в августе 1938 г., стр. 68—71.



### 5. Ժամանակագրությունը պատմության դասավանդման մեջ (2 ժամ)

Ժամանակագրության նշանակությունը յեվ նրա կապը պատմական փաստերի հետ։ Ժամանակագրական տվյալների ծավալն ու բովանդակությունը տարբեր դասարաններում։ Ժամանակագրական աղյուսակը, նրա տարբեր ձևերն ու ոգտագործումը։ ՀամԿ(բ)Կ ԿԿ յեվ ԽՍՀՄ ԺԿԽ 1934 թ. մայիսի 16-ի վորոշումը ժամանակագրության ուսումնասիրության մասին։ Լենինն ու Ստալինը ժամանակագրության ուսումնասիրության կարեվորության մասին։

Գրականություն.—Մեթոդական ոգնություն պատմության դասատուներին, եջ 27—36։

### 6. Դասագիրքը, պատմական գրականությունը յեվ ուսումնա-դիտողական նյութերը (2 ժամ)

Դասագրքի ու պատմական գրականության դերը նյութի յուրացման գործում։ Դասագրքով աշխատելու ձևերը դասարանում յեվ տանը։ Մարքսիստական պատմական գրականությունը։ Գեղարվեստական գրականությունը յեվ նրա նշանակությունը պատմության նյութի յուրացման համար։ Փաստաթղթերի ոգտագործման ձևերը։ Աշակերտների դաս պատրաստելու մեթոդը։ Գրքով աշխատելու ունակությունը։ Դիդակտիկ նյութի նշանակությունը։ Աշակերտի պատմության տետրը։ Ուսուցչի ոգնությունը աշակերտին դաս պատրաստելու գործում։

Գրականություն.—Մեթոդական ոգնություն պատմության դասատուներին, եջ 7—15. „Исторический журнал“ 1938 г. № 11, статья Лабунского „Рисунок и картина“ стр. 115—121. „Историч. журнал“, 1938 г. № 4, стр. 76—84, 104—117.

### 7. Գիտելիքների ամրացումը (2 ժամ)

Կրկնության դասերի մեթոդիկան։ Կրկնության տարբերը պատմելու յեվ զրույցի ժամանակ։ Գրավոր աշխա-

տանքը յեվ գրանցումը։ Գրաֆիկ ֆիկսացիան։ Նյութի ամրացումը տնային յեվ արտադասարանական աշխատանքի միջոցով։ Տնային աշխատանքի մեթոդիկան յեվ բովանդակությունը։ Տնային աշխատանքի ստուգումը յեվ ուղղելու ձևերը։

*Գրականություն.*—„Исторический журнал“ 1938, № 3. Фохт—„Повторение на уроках истории СССР“, стр. 109—113. „Историч. журнал“ 1938, № 5. Иванова, „Методика повторения“, стр. 114—119:

### 8. Եքսկուրսիաները (2 ժամ)

Պատմական եքսկուրսիաների նշանակությունը, տարբերիչ առանձնահատկությունները յեվ նպատակը։ Եքսկուրսիայի նյութի բովանդակությունը։ Եքսկուրսիոն աշխատանքի մեթոդիկան յեվ տեխնիկան։ Եքսկուրսիայի նախապատրաստելը։ Եքսկուրսիոն աշխատանքի արդյունքների ամփոփումն ու օգտագործումը։

*Գրականություն.* — „Историч. журнал“ 1938, № 6, статья Коловой, стр. 100—110. „Историч. журнал“, 1937, № 11, стр. 84—92:

## IV. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ (2 ԺԱՄ)

Ստուգումն ու հաշվառումը վորպես աշխատանքի օրգանական մաս յեվ յուրացման վորակի բարձրացման միջոց։ Ընթացիկ յեվ տարեվերջի հաշվառում։ Ստուգման յեվ հաշվառման ձևերը։ Հաշվառման կրիտերիան։ Ամփոփիչ հաշվառում։

Տարեվերջի ստուգողական քննությունները։ Կրկնությունը յեվ նրա կազմակերպումը։ Կրկնության հարցացուցակը։ Ստուգման հարցաթերթերը։ Ստուգողական քննության կազմակերպումը։ Աշխատանքի պայմանները։ գնահատականները։

*Գրականություն.*—Հրահանգ դպրոցների ստուգողական քննություններն անցկացնելու մասին, Հայկ. ԽՍՀ Լուսժողկոմատ, 1938 թ.



## V. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ (2 ԺԱՄ)

Պատմության արտադպրոցական աշխատանքների կազմակերպումը։ Աշակերտական պատմական խմբակները։ Պատմական խմբակների աշխատանքների պլանը, մեթոդիկան։ Ուսուցչի ղեկավար դերը յեվ աշակերտների ինքնուրույն աշխատանքը։ Ինքնագործ դիտակտիկ նյութերի պատրաստումը։ Պատմական խմբակների կոնֆերանսները։

*Գրականություն.*—„Историч. журнал“ 1938, № 7, стр. 97—99, 100—105, 106—108. „Историч. журнал“ 1938, № 11, стр. 93—102. *Պատմության արտադպրոցական խմբակների պարապմունքների մասին, ԼԺԿ Արտ. կաբինետ։*

## VI. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ (4 ԺԱՄ)

Պատմական դեպքերի մարքսիստական ըմբռնումն ու վերլուծությունը։

Պատմական գործչի բնութագրությունը։ Պատմական նյութերով խորհրդային հայրենասիրություն, պրոլետարական ինտերնացիոնալիզմ, ԽՍՀՄ-ի քաղաքացու պարտականության հասկացողություն, հաստատակամություն, խիզախություն, կոմունիստական մորալ դաստիարակելը։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության յեվ բուրժուական հեղափոխությունների հակադրությունը։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության համաշխարհային—պատմական նշանակությունը։

*Գրականություն.*—Ленин.—Соч. т. XXIII, стр. 198—199. „Историч. журнал“, 1938, № 4, стр. 88—92. *Մեթոդական օգնություն պատմության դասատուներին, եջ՝ 16—26. Աշակերտի վարքի կանոնները։*

## VII. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ ՅԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ (4 ԺԱՄ)

Պատմության ուսուցիչը յեվ նրա դերը։ Նրա պատրաստականությունը։ Պատմության ուսուցչի գրադարանը։

*Պատմական կաբինետը յեվ անկյունը դպրոցում։ Ուսուցչի աշխատանքների տարեկան պլանը և նրա նշանակությունը։ Պատմության ուսուցիչների սեկցիան դպրոցում։*

*Գրականություն.*— Ленин.—т. XIV, стр. 18. „Историч. журнал“, 1938, № 4, стр. 76—84. *Նյութեր ուսուցչական խորհրդակցությունների համար, 1937 թ. Լուսպարբերհրատ, եջ 4—6. «Խորհրդային դպրոց», 1938 թ. №№ 77, 81, 82 յեվ 83.* „Советская педагогика“, 1938 г. № 10, стр. 119—131.

---

*Խմբագիր* ԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Сдано в набор 13/III-1940 г.
Разрешено к печати 15/IV-1940 г.
1/2 печ. л. 17.600 тип. зн.

Главлит № 3052. Заказ № 567. Тираж 500.
Типография „Красный Восток“. Баку, ул. Юного пионера, 84.

ՀՀ Ազգային գրադարան
NL0408659

АЗЕРБАЙДЖАНСКИЙ ЗАОЧНЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ ИНСТИТУТ

## ПРОГРАМНЫЕ МАТЕРИАЛЫ ПО МЕТОДИКЕ ИСТОРИИ

Издание Наркомпроса АзССР
Баку—1940